

ՊՕՂՈՍ ՊԵ.— (1321—1331) (Յսկ. էջ 44). Բարոնիոսին Տարեգրոց շարունակող Raynald էն մասամբ իւրիք յայտնի է Յովհաննէս ԻԲ պապին (1316—1334) Հայոց զրկած նպաստներուն քանակը: Վատիկանի դիւանին բացուելը լուսաբանեց այս պարագան. Oriens Christianus թերթը (1904, տետր Ա. էջ 184—186) յիշեալ պապին Հայոց ըրած գրամական օգնութիւններուն համառօտ ցուցակը յառաջ բերած է քաղելով Introitus և Exitus (եւեւմուտք) հատորներէն, որ կը բովանդակեն վատիկանեան դիւանին մէջ պահուած նոյն ժամանակի յիշատակարանները: Համառօտողը՝ Շէֆէր՝ լոյ գերմաներէն լեզուով քաղուածովք մը յառաջ բերած է: Մենք հոս զանց կ'ընենք յիշել հայոց թագաւորին քարգնակին, գործակալին, հայ սապէսներուն եւ այլոց տրուած նպաստները ու միայն կը գնենք Երուսաղէմի հայոց Պօղոս պատրիարքին (փակագծի մէջ անունը սխալմամբ Պետրոս գրուած) երկու անգամ զրկուած նպաստները. առաջինը 1322 Սեպտ. Բին. Պապին և Կարտինալներու ժողովին որոշմամբ՝ եւ Փլորինտիայի Բարդերուն վաճառականական ընկերութեան միջնորդութեամբ՝ իբրև օգնութիւն Կիպրոսի և Հայաստանի թագաւորութեանց՝ Երուսաղէմի պատրիարքին 12,000 ոսկի ֆիորին (=480000 մարկ) կը տրուի: Փոխառութեան գրամը 890—960) ոսկի ֆիորին շահ կը բերէր: Շէֆէր կը գնէ հետեւեալ ծանօթութիւնը Raynald էն (ԺԵ. ոչ թէ Ե. էջ 218): Նոյն Պապը Երուսաղէմի պատրիարքին գրուած նամակի մը համաձայն, (Գաղսնի Յանկ. Յովն. Գ. էջ 266, ամ 1323) այս գումարը, ինչպէս նաեւ հետեորդ գումարը, սահմանուած էր հայոց թագաւորութիւնը սարակինոսներուն դէմ պաշտպանելու համար:

Երկրորդը՝ 1323 Մարտ 5: Պապին մասնաւոր հրամանովը սոյն վաճառականական ընկերութեան ներկայացուցիչներուն 18,000 ոսկի ֆիորին եւս (720,000 մարկ), ինչպէս նաեւ 1440 ֆիորին փոխանակութեան գրամ կը յանձնուի եւ կը պատուիրուի՝ որ այս գումարը Երուսաղէմի պատրիարքին ձեռքը տրուի Հայաստանի թագաւորութեան պաշտպանութեան համար: Introitus և Exitus հատորներուն հրատարակութիւնը մեր Կիլիկիայի պատմութեան շատ մութ կէտերը պիտի լուսաւորէ, ինչպէս յառաջ բերուած կտորներէն յայտնի կը տեսնուի: (Հա. 1908, էջ 56-58):